# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 25.03.2021թ.

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի**

**թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/06**

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Լևոն և Լամարա դեղատուն» ՍՊԸ-ի ներկայացուցիչ

Գ. Մոսինյանի (լիազորագիր՝ տրված 08.01.2021թ.),

«Խաչպար» ՍՊԸ-ի տնօրեն

Ս. Բալասանյանի (պետական ռեգիստրի գրանցման վկայական թիվ 261.110.05665),

«Լեյկո» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ

Դ. Հովսեփյանի (լիազորագիր՝ տրված 01.03.2021թ.),

Ա. Ալեքսանյանի (լիազորագիր՝ տրված 02.03.2021թ.)

«ՍԴԴ գրուպ» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ

Ա. Մնացականյանի (լիազորագիր՝ տրված 02.03.2021թ.),

Հ. Դալլաքյանի (լիազորագիր՝ տրված 16.01.2019թ.),

քննելով «Գյումրու ծննդատուն» ՓԲԸ-ի կարիքների համար բժշկական պարագաների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԳԾ-ԳՀԱՊՁԲ-2021-1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի (հետայսու նաև՝ Ընթացակարգ) շրջանակներում «Լևոն և

Լամարա դեղատուն» ՍՊԸ-ի կողմից 23.02.2021թ. ներկայացված (25.02.2021թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2021/06 բողոք), պարզեցի հետևյալը.

1. **<u>«Լևոն և Լամարա դեղատուն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>.**

«Լևոն և Լամարա դեղատուն» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 23.02.2021թ. ներկայացված բողոքով հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում եմ Ձեզ, որ «Գյումրու ծննդատուն» ՓԲԸ-ն բժշկական պարագաների ձեռքբերման նպատակով հայտարարություն է հրապարակել «ԳԾ-ԳՀԱՊՁԲ-2021-1» ծածկագրով մրցույթի մասին, որը հաստատվել է գնահատող հանձնաժողովի 2020 թ. դեկտեմբերի 5-ի թիվ 1 որոշմամբ՝ (կից փաստաթուղթ թիվ 1), որի Հրավերով պահանջվող թվով 45 ապրանքներից բողոքարկվում են թիվ 3-րդ, 4-րդ և  32 - 36-րդ չափաբաժինները (կից փաստաթուղթ թիվ 2), որոնց տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի Հավելված թիվ 1-ի «անվանումը» և «տեխնիկական բնութագիրը» սյունակներում թիվ 3-րդի մասով գրված է «բժշկական թանզիֆ (մառլյա)....Բժշկական թանզիվ՝ նախատեսված բժշկական նպատակների համար ....», թիվ 4-րդի մասով գրված է «բժշկական բամբակ…Բամբակ ոչ ստերիլ, սպիտակ, նախատեսված բժշկական նպատակների համար ...», թիվ 33-35-րդ չափաբաժինների մասերով գրված են տարբեր չափսերի «վիրաբուժական ձեռնոցներ... Ձեռնոցներ բժշկական՝ ստերիլ ...», իսկ թիվ 36-րդ չափաբաժնի մասով գրված է «ձեռնոցներ բժշկան ոչ ստերիլ…Ձեռնոցներ զննման՝ լատեքսից, ոչ ստերիլ...» տվյալները (կից փաստաթուղթ թիվ 3, էջեր՝ 1-3):

2021թ. հունվարի 11-ին կայացած բացման նիստի թիվ 1-ին արձանագրության թիվ 2-րդ կետով գնահատող հանձնաժողովը քննարկել է մրցույթի յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմանների համապատասխան կազմված լինելու մասին հարցը և որոշում է կայացրել, որ՝ բոլոր փաստաթղթերը համապատասխան են, թիվ 7-րդ կետով հաստատել է Հավելված թիվ 1-ը, որտեղ ներկայացրել է մասնակիցների առաջարկած գների աղյուսակը, իսկ թիվ 9 կետով հաստատել է առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների ցանկը (կից փաստաթուղթ թիվ 4, էջեր՝ 1-4):

2021թ. փետրվարի 13-ին «Լևոն և Լամարա դեղատուն» ՍՊԸ -ի կողմից դիմում է հղվել մրցույթի գնահատող հանձնաժողովին առ այն, որ մրցույթի որոշ մասնակիցների կողմից Հրավերի թիվ 3-րդ, 4-րդ և 32-36-րդ չափաբաժինների մասերով պահանջվող ապրանքների համար ներկայացված «Գնային առաջարկներում հաշվարկված և ներառված են ԱԱՀ-ի մեծությունները, որոնք չեն համապատասխանում ՀՀ-ում գնումների գործընթացները կարգավորող իրավական ակտերի պահանջներին՝ այսինքն՝ հակասում են գործող ՀՀ Օրենսդրությանը:

Դիմումով «Լևոն և Լամարա դեղատուն» ՍՊԸ-ն խնդրել էր մրցույթի գնահատող հանձնաժողովին՝ ղեկավարվելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման թիվ 67 կետի սահմանումներով, ստուգել ներկայացված փաստերի և իրավական ակտերի հավաստիությունը, որոնք հիմք կհանդիսանան Հրավերի թիվ 3-րդ, 4-րդ և 32-36-րդ չափաբաժինների մասերով մրցույթի որոշ մասնակիցների կողմից Գնային առաջարկներում առանձնացված տողով ԱԱՀ-ի գծով վճարվելիք գումարի չափի հաշվարկված լինելը որակել որպես իրականությանը չհամապատասխանող, և մերժել մրցույթի այդ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը՝ Հրավերի թիվ 3-րդ, 4-րդ և 32-36-րդ չափաբաժինների մասերով (կից փաստաթուղթ թիվ 5, էջեր՝ 1-3):

2021թ. հունվարի 14-ին կայացած թիվ 2-րդ նիստի արձանագրությունով գնահատող հանձնաժողովը՝ քննարկելով «Լևոն և Լամարա դեղատուն» ՍՊԸ-ի դիմումը, որոշել է դիմել Ֆինանասների նախարարություն և մինչև Ֆինանսների նախարարությունից համապատասխան պատասխան ստանալը նշված չափաբաժինների գծով մրցույթը կասեցնել (կից փաստաթուղթ թիվ 6) և նույն օրն էլ գրությունով դիմել է ՀՀ ՖՆ (կից փաստաթուղթ թիվ 7, էջեր ՝1- 2):

ՀՀ ՖՆ-ի առաջին տեղակալ Կարեն Բրուտյանի կողմից պատասխան է տրվել «Գյումրու ծննդատուն» ՓԲԸ-ի տնօրենի ժ/պ Է. Սուքիասյանին (կից փաստաթուղթ թիվ 8, էջեր՝ 1-3), սակայն «ԳԾ-ԳՀԱՊՁԲ-2021-1» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովը՝ անգործություն դրսևորելով, չի անդրադարձել ինչպես ՀՀ ՖՆ-ի տրված պատասխանին, այնպես էլ «Լևոն և Լամարա դեղատուն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված դիմումով բարձրացված հարցերին, և 2021թ. փետրվարի 22-ին կայացած նիստերի թիվ 5-րդ (կից փաստաթուղթ թիվ 9, էջեր ՝1-2) և թիվ 6-րդ արձանագրությունների թիվ 2-րդ կետերով որոշում է կայացրել Հրավերի թիվ 3-րդ, 4-րդ և 32-36-րդ չափաբաժինների մասերով հաղթողներ ճանաչելու վերաբերյալ (կից փաստաթուղթ թիվ 10, էջեր՝ 1-2):

5) բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները՝

1)Համաձայն «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի՝

1. Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից, որոնցից սույն բողոքին առընչվում են հետևյալ իրավական ակտերը՝

ա) Համաձայն «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի՝ 15-րդ հոդվածի համաձայն՝ ԱԱՀ-ից ազատելը՝հարկվող շրջանառության նկատմամբ այն չհաշվարկելն է:

բ) Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 64-րդ հոդվածի 1-ին մասի՝

ԱԱՀ-ից ազատելը Օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված՝ ԱԱՀ-ով հարկման օբյեկտ համարվող գործարքների ու գործառնությունների հարկման բազայի նկատմամբ ԱԱՀ չհաշվարկելն է:

գ) Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 12-րդ կետի՝

ԱԱՀ-ից ազատված գործարքներ են համարվում դոնորային արյան և դրա բաղադրամասերի, մայրական կաթի, պրոթեզաօրթոպեդիկ պարագաների, բժշկական տեխնիկայի և բժշկական նշանակության ապրանքների օտարումը, բժշկական կազմակերպություններում բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում պացիենտների պատրաստած ապրանքների օտարումը, աշխատանքների կատարումը, ծառայությունների մատուցումը:

Նույն կետով սահմանված արտոնությունների կիրառության շրջանակը սահմանում է ՀՀ Կառավարությունը:

դ) Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի «Ավելացված արժեքի հարկից ազատման արտոնությունների կիրառության շրջանակները սահմանելու մասին» թիվ 1317-Ն որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետով սահմանված՝ թիվ 3 հավելվածի 3-րդ կետի 2-րդ ենթակետի՝ ԱԱՀ-ից ազատման արտոնությունների կիրառության շրջանակի մեջ են մտնում նաև՝

3. Բժշկական նշանակության ապրանքները՝ ախտորոշման, կանխարգելման, բուժման, անզգայացման ժամանակ օգտագործվող այն բժշկական նշանակության ապրանքներն են, որոնք՝

2) ներառված են սույն հավելվածի բժշկական նշանակության ապրանքների ցանկում:

ե) Համաձայն ՀՀ Կառավարության 2017թ. հոկտեմբերի 5-ի «Ավելացված արժեքի հարկից ազատման արտոնությունների կիրառության շրջանակները սահմանելու մասին» N 1317-Ն որոշման Հավելված 3-րդին կից Բժշկական նշանակության ապրանքների ցանկի թիվ 31-րդ և 32-րդ կետերի՝

31. Տարբեր չափի ռետինե անատոմիական ձեռնոցներ

32. Տարբեր չափի ռետինե վիրաբուժական ձեռնոցներ,

անվանումներով ապրանքները ընդգրկված են ԱԱՀ-ից ազատման արտոնության կիրառության նպատակով ԱԱՀ-ից ազատված ապրանքների ցանկում:

«ԳԾ-ԳՀԱՊՁԲ-2021-1» ծածկագրով մրցույթի Հրավերի թիվ 32-35-րդ չափաբաժինների մասերով պահանջվում են տարբեր չափսերի վիրաբուժական ձեռնոցներ Ձեռնոցներ բժշկական՝ ստերիլ ..., իսկ թիվ 36-րդ չափաբաժնի մասով պահանջվում են ձեռնոցներ բժշկան ոչ ստերիլ…Ձեռնոցներ զննման՝ լատեքսից, ոչ ստերիլ… ապրանքները, որոնք հանդիսանում են բնական հումքից՝ կաուչուկի լատեքսից, պատրաստված ռետինե ձեռնոցներ, որոնցից ստերիլները կիրառվում են վիրաբուժական միջամտությունների (վիրահատություններ) ժամանակ, իսկ ոչ ստերիլները կիրառվում են ոչ վիրաբուժական միջամտությունների (անատոմիական, ատամնաբուժական, գինեկոլոգիական և այլն) ժամանակ:

Այսինքն՝ Հրավերի թիվ 32-36-րդ չափաբաժինների մասերով պահանջվող ապրանքները ընդգրկված են ԱԱՀ-ից ազատման արտոնության կիրառության նպատակով ԱԱՀ-ից ազատված ապրանքների ցանկում, այդ ապրանքները ՀՀ տարածքում իրացնելիս իրավունք չկա դրանց համար ԱԱՀ հարկատեսակ հաշվարկել:

Հրավերի թիվ 32-36-րդ չափաբաժինների մասերով առաջարկներ կան նաև մրցույթի այլ մասնակիցների կողմից ևս, որոնք սակայն իրենց գնային առաջարկներում չեն հաշվարկել ԱԱՀ-ի մեծությունները և չեն ներառել դրանք ապրանքի գնի մեջ՝ պահպանելով ՀՀ-ում գնումների գործընթացները կարգավորող իրավական ակտերի պահանջները (կից փաստաթուղթ թիվ 9, էջեր ՝ 3-4):

Վերոգրյալ փաստացի և իրավական հիմքերն ու ապացույցները աներկբա կերպով ապացուցում են, որ «ԳԾ-ԳՀԱՊՁԲ-2021-1» ծածկագրով մրցույթի որոշ մասնակիցների կողմից ներկայացված «Գնային առաջարկ»-ներում Հրավերի թիվ 32-36-րդ չափաբաժինների մասերով պահանջվող ապրանքների համար ԱԱՀ-ի հաշվարկելը և ներկայացնելը չեն համապատասխանում ՀՀ-ում գնումների գործընթացները

կարգավորող իրավական ակտերի պահանջներին, այսինքն՝ հակասում են գործող ՀՀ Օրենսդրությանը:

2) Հրավերի թիվ 3-րդ չափաբաժնի մասով պահանջվում է «Բժշկական թանզիվ» ապրանքը, թիվ 4-րդ չափաբաժնի մասով պահանջվում է «Բժշկական բամբակ» ապրանքը, որոնք՝

ա) Համաձայն ՀՀ կողմից 2016թ. հոկտեմբերի 18-ին ստորագրված և 2017թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտած Եվրասիական Տնտեսական Միության (ԵԱՏՄ) թիվ 101 որոշումով հաստատված՝ «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքների միասնական անվանացանկի (ԱՏԳ ԱԱ) դասակարգման, ընդգրկված են 3005 ծածկագրին պատկանող՝ 3005 Բամբակ, թանզիֆ, փաթույթային վիրակապեր և նմանատիպ արտադրատեսակներ (օրինակ՝ վիրակապական նյութեր, կպչուն սպեղանիներ, թրջոցալաթեր)՝ ներծծված կամ ծածկված դեղագործական նյութերով կամ մանրածախ վաճառքի համար բաժնեծրարված տարաներում կամ փաթեթվածքներում, որոնք նախատեսված են բժշկության, վիրաբուժության, ատամնաբուժության կամ անասնաբուժության մեջ օգտագործելու համար» 3005 90 310 0 և 3005 90 100 0 ծածկագրով ապրանքների ցանկում:

(կից փաստաթուղթ թիվ 11)

բ) Համաձայն ՀՀ Կառավարության 2017թ. հոկտեմբերի 5-ի «Ավելացված արժեքի հարկից ազատման արտոնությունների կիրառության շրջանակները սահմանելու մասին» N 1317-Ն որոշման Հավելված 3-րդի թիվ 3-րդ կետի 1-ին մասի՝

3. Բժշկական նշանակության ապրանքները՝ ախտորոշման, կանխարգելման, բուժման, անզգայացման ժամանակ օգտագործվող այն բժշկական նշանակության ապրանքներն են, որոնք՝

1) դասվում են Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի դասակարգչի 3005, 3006, 3701 10, 3702 10, 3707 90, 4014, 5601 21, 5601 22 ծածկագրերին,

գ) Համաձայն «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի՝ 15-րդ հոդվածի՝ ԱԱՀ-ից ազատելը՝ հարկվող շրջանառության նկատմամբ այն չհաշվարկելն է:

Վերոգրյալ փաստացի և իրավական հիմքերն ու ապացույցները աներկբա կերպով ապացուցում են, որ «ԳԾ-ԳՀԱՊՁԲ-2021-1» ծածկագրով մրցույթի որոշ մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկներում Հրավերի թիվ 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասերով պահանջվող ապրանքների համար ԱԱՀ-ի հաշվարկելը և

ներկայացնելը չեն համապատասխանում ՀՀ-ում գնումների գործընթացները կարգավորող իրավական ակտերի պահանջներին, այսինքն՝ հակասում են գործող ՀՀ Օրենսդրությանը:

2) Հրավերի թիվ 3-րդ, 4-րդ և 32-36-րդ չափաբաժինների մասերով գնահատող հանձնաժողովի անգործությունը՝

Համաձայն ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման թիվ 67-րդ կետի՝ գնահատող հանձնաժողովը կարող է ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Նման հարցում ուղարկվելու դեպքում համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են գրավոր եզրակացություն: Եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

«ԳԾ-ԳՀԱՊՁԲ-2021-1» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովը անգործություն դրսևորելով՝ չի անդրադարձել «Լևոն և Լամարա դեղատուն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված դիմումին և ՀՀ ՖՆ-ի գրությանը, չի իրականացրել օրենսդրությամբ իրեն ընձեռնված՝ մասնակիցների ներկայացրած տվյալների ստուգմանը ուղղված հնարավորությունը, որի արդյունքում մրցույթի որոշ մասնակիցների կողմից Հրավերի թիվ 3-րդ, 4-րդ և 32-36-րդ չափաբաժինների մասերով պահանջվող ապրանքների համար ներկայացված գնային առաջարկներում հաշվարկված և ներառված ԱԱՀ-ի մեծությունները՝ որոնք չեն համապատասխանում ՀՀ-ում գնումների գործընթացները կարգավորող իրավական ակտերի պահանջներին, պետք է որակվեին որպես իրականությանը չհամապատասխանող, իսկ այդ մասնակիցների հայտերը մերժվեին տվյալ չափաբաժինների մասով»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է պարտավորեցնել «Գյումրու ծննդատուն» ՓԲԸ-ի «ԳԾ-ԳՀԱՊՁԲ-2021-1» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովին՝ չեղյալ հայտարարելու 11.01.2021թ. նիստի թիվ 1 արձանագրության 2-րդ կետով կայացված որոշումը՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի սահմանված պայմաններին համապատասխան լինելու և բոլոր փաստաթղթերի համապատասխան լինելու մասին և 22.02.2021թ. նիստերի թիվ 5 և թիվ 6

արձանագրությունների 2-րդ կետերով ընդունված որոշումը՝ 3-րդ, 4-րդ, և 32-36-րդ չափաբաժինների մասով մրցույթի հաղթող մասնակիցներին ճանաչելու մասին:

Վերը շարադրված բողոքին կից Ընկերության կողմից ներկայացվել է ՀՀ ֆինանսների նախարարի առաջին տեղակալ Կ.Բրուտյանի գրությունը՝ ուղղված «Գյումրու ծննդատուն» ՓԲԸ-ին՝ հետևյալ բովանդակությամբ.

«Ուսումնասիրելով հիշյալ գրությունները, այդ թվում՝ «Լեյկո» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) կողմից ներկայացված՝ պետական գնումների շրջանակներում ներկայացվող գնային առաջարկում ԱԱՀ-ից ազատված գործարքների մասով ԱԱՀ-ի վերաբերյալ տեղեկատվություն ներառելու հետ կապված դիտարկումները՝ հայտնում ենք հետևյալը.

Պետական գնումների շրջանակներում Ընկերության կողմից որոշ ապրանքների օտարումն ԱԱՀ-ից ազատված լինելու հետ կապված դիտարկումների վերաբերյալ.

Ընկերությունը նշում է, որ վերջինիս կողմից օտարվող որոշ ապրանքների ԱՏԳ ծածկագրերը տարբերվում են ՀՀ կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի «Ավելացված արժեքի հարկից ազատման արտոնությունների կիրառության շրջանակները սահմանելու մասին» թիվ 1317-Ն որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետով սահմանված թիվ 3 հավելվածում նշված ԱՏԳ ԱԱ ծածկագրերից: Բացի այդ, նշվում է, որ ընկերության կողմից օտարվող ձեռնոցները չեն հանդիսանում նշյալ հավելվածի բժշկական նշանակության ապրանքների ցանկում ներառված՝ անատոմիական և վիրաբուժական ձեռնոցներ:

Վերոգրյալի կապակցությամբ, հայտնում ենք, որ ՀՀ հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք)՝ 64-րդ հոդվածի՝

1-ին մասի համաձայն՝ ԱԱՀ-ից ազատելը Օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված՝ ԱԱՀ-ով հարկման օբյեկտ համարվող գործարքների ու գործառնությունների հարկման բազայի նկատմամբ ԱԱՀ չհաշվարկելն է,

2-րդ մասի 12-րդ կետի համաձայն՝ ԱԱՀ-ից ազատված գործարքներ են համարվում դոնորային արյան և դրա բաղադրամասերի, մայրական կաթի, պրոթեզաօրթոպեդիկ պարագաների, բժշկական տեխնիկայի և բժշկական նշանակության ապրանքների օտարումը, բժշկական կազմակերպություններում բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում պացիենտների պատրաստած ապրանքների օտարումը, աշխատանքների կատարումը, ծառայությունների մատուցումը: Նույն կետով սահմանված արտոնությունների կիրառության շրջանակը սահմանում է Կառավարությունը:

ՀՀ կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի «Ավելացված արժեքի հարկից ազատման արտոնությունների կիրառության շրջանակները սահմանելու մասին» թիվ 1317-Ն որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետով սահմանված թիվ 3 հավելվածի 3-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերի համաձայն՝ բժշկական նշանակության ապրանքները ախտորոշման, կանխարգելման, բուժման, անզգայացման ժամանակ օգտագործվող այն բժշկական նշանակության ապրանքներն են, որոնք՝

1) դասվում են Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի դասակարգչի 3005, 3006, 3701 11, 3702 10, 3707 90, 4014, 5601 21, 5601 22 ծածկագրերին.

2) ներառված են նույն հավելվածի բժշկական նշանակության ապրանքների ցանկում: Մասնավորապես՝ նույն ցանկի 31-րդ և 32-րդ կետերի համաձայն՝ բժշկական նշանակության ապրանքների թվին են դասվում տարբեր չափի ռետինե անատոմիական և վիրաբուժական ձեռնոցները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ հայտնում ենք, որ գործող հարկային օրենսդրության համաձայն՝ ԱԱՀ-ից ազատված է համարվում ոչ միայն արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի դասակարգչի 3005, 3006, 3701 10, 3702 10, 3707 90, 4014, 5601 21 և 5601 22 ծածկագրերի դասվող ապրանքների օտարումը, այլ նաև այն ապրանքների (տարբեր չափի ռետինե և վիրաբուժական ձեռնոցներ) օտարումը, որոնք ներառված են վերոնշյալ ցանկում: Հետևաբար, այն հանգամանքը, որ, խնդրո առարկա ապրանքներն Ընկերության կողմից հայտարարագրվել են ԱՏԳ ԱԱ այլ ծածկագրերով, դեռևս չի նշանակում, որ այդ օտարումն ազատված չէ ԱԱՀ-ից:

Տեղեկացնում ենք նաև, որ Օրենսգրքի.

-70-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ԱԱՀ վճարողները հաշվետու ժամանակաշրջանի համար պետական բյուջե են վճարում այդ ժամանակաշրջանում իրականացված՝ Օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված՝ հարկման օբյեկտ համարվող գործարքների հարկման բազայի նկատմամբ հաշվարկված ԱԱՀ-ի գումարների և Օրենսգրքի 71-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվանցվող (պակասեցվող) ԱԱՀ-ի գումարների (եթե Օրենսգրքի 72-րդ հոդվածով այլ բան սահմանված չէ) դրական տարբերությունը,

-71-րդ հոդվածով սահմանված են ԱԱՀ-ի հաշվանցումների (պակասեցումների) իրականացման կարգը,

-72-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ Օրենսգրքի 70-րդ և 74-րդ հոդվածներով սահմանված կարգով բյուջե վճարման ենթակա կամ բյուջեից փոխհատուցման ենթակա ԱԱՀ-ի գումարների հաշվարկման նպատակով ԱԱՀ-ի հաշվանցումներ (պակասեցումներ) չեն կատարում, եթե ձեռք բերված և (կամ) ներմուծված ապրանքները, ընդունված աշխատանքները և (կամ) ստացված ծառայությունները վերագրվում են ԱԱՀ-ից ազատված գործարքներին, բացառությամբ Օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 19-րդ և 31-րդ կետերով սահմանված դեպքերի, երբ ԱԱՀ-ի հաշվանցումները (պակասեցումները) կատարվում են Օրենսգրքով սահմանված կարգով՝ անկախ ձեռք բերված և (կամ) ներմուծված ապրանքները, ընդունված աշխատանքները և (կամ) ստացված ծառայությունները ԱԱՀ-ից ազատված գործարքներին վերագրվելու հանգամանքից:

Հետևաբար, հայտնում ենք, որ ԱԱՀ-ից ազատված գործարքների մասով ԱԱՀ վճարող տնտեսավարող սուբյեկտները չեն կարողանալու հաշվանցել ներմուծման փուլում կամ մատակարարներին վճարված ԱԱՀ-ի գումարները, ինչը նշանակում է, որ գործնականում այդ գումարները դառնում են ապրանքների ինքնարժեքի տարր և ներառվում ապրանքների գնի մեջ:

Ինչ վերաբերում է ընկերության կողմից օտարվող ձեռնոցները որպես անատոմիական կամ վիրաբուժական ձեռնոցներ որակելուն, ապա հայտնում ենք, որ այդ հայցի քննարկումը դուրս է ՀՀ ֆինանսների նախարարության իրավասությունների շրջանակից:

Ընկերության կողմից ներկայացված հարկային արտոնություններից օգտվելու հետ կապված դիտարկման վերաբերյալ.

Օրենսգրքի՝

-4-րդ հոդվածի 1-ին մասի 37-րդ կետի համաձայն՝ հարկային արտոնությունը Օրենսգրքով սահմանված հարկերի, Օրենսգրքով սահմանված վճարների, տույժերի և (կամ) տուգանքների հաշվարկման ու վճարման ընդհանուր կարգից և (կամ) ժամկետներից բացառություն է, որի արդյունքում չի առաջանում հարկային պարտավորություն կամ նվազում, կամ վերանում է կատարման ենթակա հարկային պարտավորության գումարը, կամ հետաձգվում են դրա հաշվարկման և (կամ) կատարման ժամկետները,

-19-րդ հոդվածի՝

ա. 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ հարկից ազատումը համարվում է հարկային արտոնություն,

բ. 4-րդ մասի համաձայն՝ հարկ վճարողը կարող է հարկային մարմին ներկայացնել հարկային մարմնի հաստատած ձևով հայտարարություն և հրաժարվել հարկային արտոնությունից օգտվելու իրավունքից, բացառությամբ նույն հոդվածի 6-րդ մասով սահմանված դեպքերի: Նույն մասով սահմանված հայտարարության ներկայացման դեպքում՝

հարկային արտոնությունը դադարում է գործել հայտարարության ներկայացման օրվանից հետո ձևավորվող հարկման օբյեկտների մասով,

հայտարարության ներկայացման օրվանից հետո իրականացվող գործարքները, գործառնությունները Օրենսգրքի կիրառության իմաստով համարվում են հարկվող գործարքներ, գործառնություններ,

հարկ վճարողը մինչև հայտարարության ներկայացման օրն ընդգրկող հարկային տարվան հաջորդող հարկային տարվա ավարտը չի կարող հրաժարվել հարկային արտոնությունից չօգտվելու վերաբերյալ հայտարարությունից, հարկ վճարողի կողմից չօգտագործված հարկային արտոնությունը ենթակա փոխանցման հաջորդ հաշվետու ժամանակաշրջաններ՝ ապագա հարկային պարտավորությունների նվազեցման նպատակով, հարկային արտոնությունից չօգտվելը հարկ վճարողին չի ազատում հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի դրույթները խախտելու դեպքում նրա նկատմամբ սահմանված պատասխանատվության միջոցների կիրառությունից:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ հայտնում ենք, որ եթե տնտեսավարող սուբյեկտները ցանկանում են չօգտվել Օրենսգրքով սահմանված հարկային արտոնություններից, ապա պետք է հարկային մարմին ներկայացնեն հարկային մարմնի հաստատած ձևով հայտարարություն՝ հարկային արտոնությունից օգտվելու իրավունքից հրաժարման վերաբերյալ, այլապես Օրենսգրքով սահմանված հարկային արտոնությունները կիրառելի են օրենքի ուժով:

Տեղեկացնում ենք նաև, որ հայտերի գնահատման իրավասությունը գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ վերապահված է գնահատող հանձնաժողովին»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 02.03.2021թ. ժամը 10:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով իր հերթին պնդել է վերը շարադրված բողոքը:

**2. «Գյումրու ծննդատուն» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.**

«Գյումրու ծննդատուն» ՓԲԸ-ի կողմից (հետայսու նաև՝ Պատվիրատու) Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 02.03.2021թ. ժամը 10:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

**3. «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.**

«Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 26.02.2021թ. ներկայացվել է գրավոր միջնորդություն՝ ԳԲՔԱ-ՆԳ-2021/06 բողոքի շրջանակներում իրեն որպես երրորդ կողմ ներգրավելու վերաբերյալ:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից միջնորդությունը բավարարվել է:

«Խաչպար» ՍՊԸ-ի տնօրենը ներկայացել է բողոքի քննության նպատակով 02.03.2021թ. ժամը 10:40-ին հրավիրված նիստին և հայտնել հետևյալը.

«Անդրադառնալով ձեռնոցներին՝ տեղեկացնում եմ, 32-35-րդ չափաբաժիններում նշված է վիրաբուժական ձեռնոցներ N7, N7,5, N8 և N8,5 և 36-րդ չափաբաժնով գրված է ձեռնոցներ բժշկական ոչ ստերիլ, մի տեղ գրված է վիրաբուժական մի տեղ բժշկական, տերմինները տարբեր են, բայց էությունը նույնն է: Ցանկանում եմ Ձեր ուշադրությունը հրավիրել այն հանգամանքի վրա, որ այս չափաբաժինների մասով «ՍԴԴ գրուպ» և «Լեյկո» ՍՊ ընկերություններն են ԱԱՀ նախատեսել գնային առաջարկում: «ՍԴԴ գրուպ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը հայտնեց, որ իր կողմից 32-36-րդ չափաբաժինների մասով

ներկայացված Հավելված 1.1-ը համապատասխանում է հրավերի պահանջներին, ինչը նշանակում է, որ դրանք վիրաբուժական ձեռնոցներ են: Հայտնում եմ, որ ռետինե ձեռնոցները ստացվում են բնական հումքից և արհեստական հումքից, բնական հումքը լատեքսն է, որը ստացվում է կաուչուկի ծառից, իսկ արհեստականը՝ բուտադիոնից և նիտրիլից:

Ինչ վերաբերում է 4-րդ չափաբաժնին՝ բժշկական բամբակին՝ ԱՏԳ ԱԱ 3005 ծածկագրի դիրքում գրված է բամբակ և ԱՏԳ ԱԱ 3005 90 100 կոդում՝ բամբակ և բամբակից արտադրատեսակներ, այսինքն՝ սա Եվրազեսի կողմից ընդունված պաշտոնական փաստաթուղթ է, որն ապացուցում է, որ հրավերով պահանջված բամբակ ապրանքը մտնում է ԱՏԳ ԱԱ 3005 կոդի մեջ, որն էլ ՀՀ կառավարության 1317-Ն որոշմամբ օգտվում է արտոնությունից:

Ինչ վերաբերում է 3-րդ չափաբաժնին՝ թանզիֆին, գրված է բժշկական թանզիֆ մառլյա, նշվածը դասվում է ԱՏԳ ԱԱ 3005 90 300 կոդին, այսինքն՝ թանզիֆ անունով ապրանքը 3005 կոդի դիրքն է, որը համաձայն ՀՀ կառավարության որոշմամբ նույնպես օգտվում է արտոնությունից»:

**4. «Լեյկո» ՍՊԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.**

«Լեյկո» ՍՊԸ-ի կողմից 26.02.2021թ. ներկայացվել է գրավոր միջնորդություն՝ ԳԲՔԱ-ՆԳ-2021/06 բողոքի շրջանակներում իրեն որպես երրորդ կողմ ներգրավելու վերաբերյալ:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից միջնորդությունը բավարարվել է:

«Լեյկո» ՍՊԸ-ն ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը բողոքի քննության նպատակով 02.03.2021թ. ժամը 10:40-ին հրավիրված նիստին, ովքեր ներկայացրել են գրավոր դիրքորոշում՝ հետևյալ բովանդակությամբ.

««Գյումրու ծննդատուն» ՓԲԸ-ն բժշկական պարագաների ձեռքբերման նպատակով հայտարարել է «ԳԾ-ԳՀԱՊՁԲ-2021-1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որի շրջանակներում գնահատող հանձնաժողովի կայացրած մի շարք որոշումներ 23.02.2021թ.-ին բողոքարկվել են ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին «Լևոն և Լամարա» ՍՊԸ-ի /այսուհետ նաև' Բողոքաբեր/ կողմից:

Ծանոթանալով «Լևոն և Լամարա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի բովանդակությանը, ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 5-րդ մասով' ներկայացնում ենք սույն դիրքորոշումը ներքոնշյալի մասին:

Բողոքաբերի կողմից վիճարկվել են գնահատող հանձնաժողովի անգործությունը և Հրավերի թիվ 3-րդ, 4-րդ, 32-36-րդ չափաբաժիններով հաղթողներ ճանաչելու վերաբերյալ որոշումները, ինչպես նաև խնդրել է պարտավորեցնել գնահատող հանձնաժողովին չեղյալ հայտարարել նույն հանձնաժողովի 11.01.2021թ.-ի 1-ին նիստի թիվ 2-րդ կետով «... Յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի սահմանված պայմաններին համապատասխան լինելու մասին», «Ընդունված բոլոր փաստաթղթերը համապատասխան են» որոշումը:

Որպես իր բողոքի հիմնավորում' Բողոքաբերը վկայակոչել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 4-րդ, «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 15-րդ (որը, ի դեպ, ուժը կորցրել է) հոդվածները, ՀՀ հարկային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 12-րդ կետը և դրա հիման վրա ընդունված ՀՀ կառավարության 05.10.2017թ.-ի թիվ 1317-Ն որոշման թիվ 3 հավելվածի 3-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերը և նույն հավելվածում տեղ գտած Բժշկական նշամակության ապրանքների ցանկի 31-րդ և 32-րդ կետերը:

Մասնավորապես, Բողոքաբերը նշել է, որ մրցույթի որոշ մասնակիցներ իրենց կողմից առաջարկվող գներում ներառել են նաև ավելացված արժեքի հարկ (այսուհետ' ԱԱՀ) այն պարագայում, երբ, ըստ Բողոքաբերի, վերջիններս, համաձայն վերոնշյալ նորմատիվ իրավական ակտերի, ազատված էին ԱԱՀ-ով գործարքների հարկումից, և դրանով իսկ խախտել են գնումների գործընթացը կարգավորող իրավական ակտերի պահանջները:

Գնահատող հանձնաժողովի անգործության մասով էլ Բողոքաբերը վկայակոչել է այն հանգամանքը, որ գնահատող հանձնաժողովը քննարկման առարկա չի դարձրել ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալի գրությունը (եզրակացությունը), մինչդեռ, ըստ Բողոքաբերի, պարտավոր էր, և այդպիսով դրսևորել է անգործություն:

Վերը նշված հանգամանքներին անդրադարձ կատարենք առանձին-առանձին:

1.Նախ անդրադառնանք բժշկական թանզիֆի մասով ԱԱՀ-ից ազատված լինելու կամ չլինելու, և դրանով պայմանավորված' գնումների գործընթացը կարգավորող իրավական ակտերի պահանջները խախտելու հարցին:

Ըստ բողոքաբերի' բժշկական թանզիֆը դասակարգվում է ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 3005 ծածկագրով, որը նշված է ՀՀ կառավարության 05.10.2017թ.-ի թիվ 1317-Ն որոշման թիվ 3

հավելվածի 3-րդ կետի 1-ին ենթակետում, ըստ այդմ՝ հիշյալ ծածկագրով ապրանքի հետ կապված գործարքները ազատված են ԱԱՀ-ից:

Նախ նշենք, որ Բողոքաբերը, նշելով բժշկական թանզիֆի՝ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 3005 ծածկագրով դասակարգվելու հանգամանքը, քննարման առարկա չի դարձրել ԵԱՏՄ հանձնաժողովի խորհրդի կողմից հաստատված «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքների միասնական անվանացանկում» 3005 ծածկագրով դասակարգման ենթակա ապրանքների բնութագրերին: Մասնավորապես, հիշյալ ծածկագրով դասակարգման են ենթակա բացառապես այն ապրանքները, որոնք ներծծված կամ ծածկված են դեղագործական նյութերով կամ մանրածախ վաճառքի համար բաժնեծրարված են տարաներում կամ փաթեթվածքներում, և որոնք նախատեսված են բժշկության, վիրաբուժության, ատամնաբուժության կամ անասնաբուժության մեջ օգտագործելու համար:

Հարկ է նկատել, որ «ԳԾ-ԳՀԱՊՁԲ-2021-1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտարարության մեջ «Գնման առարկայի բնութագիր» հատվածում 3-րդ չափաբաժինը ամրագրվել է որպես բժշկական թանզիֆ (մարլյա)՝ 90 սմ լայնքով: «ԳԾ-ԳՀԱՊՁԲ-2021-1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտարարության տեխնիկական բնութագրի հատվածում հիշյալ ապրանքի մասով չի նշվել դրա՝ դեղագործական նյութերով ներծծված կամ ծածկված լինելը կամ մանրածախ վաճառքի համար փաթեթավորված լինելը: Պատվիրատուն հայցել է 1000 մ երկարությամբ, 90 սմ լայնությամբ մարլյա, իսկ դրա բնութագրից էլ ակնհայտ է, որ այն այն որևէ դեպքում չէր կարող համապատասխանել ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 3005 ծածկագրին՝ հաշվի առնելով նաև այն, որ ներծծված կամ ծածկված չէր դեղագործական նյութերով: Պատվիրատուի հայցած իրականում դեռևս ոչ ստերիլ վիճակում գտնվող հումքային է (1000 մ երկարությամբ, 90 սմ լայնությամբ մարլյա), և Պատվիրատուն յուրաքանչյուր անգամ ինքն է որոշելու ստերիլիզացնել այն, թե ոչ՝ կախված օգտագործման նպատակից: Պատվիրատուն ինքը առաջարկված մասով փաստաթղթերն ընդունել է, դրանց բովանդակության առնչությամբ առարկություններ չի հայտնել, հետևաբար վերջինիս ներկայացվել են հենց «ԳԾ-ԳՀԱՊՁԲ-2021-1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով հայցվող ապրանքի տվյալները: Պատվիրատուի կողմից հայցվող մարլյան դասակարգվում է ոչ թե ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 3005 ծածկագրով, այլ ԱՏԳ ԱԱ 5208 21 1000 0 ծածկագրով:

Հարկ է նշել, որ նշված թանզիֆից ստացված ցանկացած ստերիլ առանց փաթեթավորման արտադրանք՝ վիրակապ , անձեռոցիկ, նույնպես դասվում է ԱՏԳ ԱԱ 5208 21 1000 0 ծածկագրին, որը կդասվի 3005 ծածկագրով միմայն, եթե օրինակ վիրակապը մանրէազերծվի և ունենա առանձին փաթեթավորում:

Որպես ասվածի հիմնավորում՝ նշենք հետևյալը. «Լեյկոալեքս» ՍՊԸ-ն, որը հանդիսանում են «Լեյկո» ՍՊԸ-ի մատակարարը՝ համաձայն կողմերի միջև կնքված մատակարարման պայմանագրերի (դրանցից մեկը՝ 11.01.2021թ.-ի մատակարարման պայմանագիրը, կցում ենք սույն դիրքորոշմանը), բժշկական թանզիֆ ներմուծելիս այն դասակարգել էր ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 3005 ծածկագրով: Մինչդեռ, մաքսային մարմինը կամերալ ստուգման արդյունքներով, ինչպես նաև 26.03.2019թ.-ի «Ապրանքի ոչ ճիշտ դասակարգում հայտնաբերվելու դեպքում ապրանքի դասակարգման վերաբերյալ» թիվ ԱԴՈ-19-000017 որոշմամբ (պատճենը կցվում է) արձանագրել էր, որ ««ԼԵՅԿՈԱԼԵՔՍ» ՍՊ Ընկերությունը ՀՀ է ներմուծել բինտերի, վիրակապական նյութերի և բժշկական թանզիֆի պատրաստման համար բամբակե սպիտակեցրած գործվածք՝ բամբակի մանրաթելերի 85% զանգվածային բաժին կամ դրանից ավելի պարունակությամբ, 100գ/մ2-ից ոչ ավելի մակերեսային խտությամբ: (....) Հետևաբար, առաջնորդվելով դասակարգման 1-ին և 6-րդ կանոններով, բինտերի, վիրակապական նյութերի և բժշկական թանզիֆի պատրաստման համար բամբակե սպիտակ գործվածք՝ բամբակի մանրաթելերի 85% զանգվածային բաժին կամ դրանից ավելի պարունակությամբ, 100գ/մ2-ից ոչ ավելի մակերեսային խտությամբ, ապրանքատեսակը դասակարգվում է ԱՏԳ ԱԱ 5208 21 1000 0 ծածկագրով»: ՀՀ ՊԵԿ-ի կողմից նման դիրքորոշում հայտնելու համար հիմք են ընդունվել ԵԱՏՄ կոլեգիայի 16.09.2014թ.-ի թիվ 157 որոշման պահանջները, համաձայն որոնց՝ բինտերի, վիրակապական նյութերի և բժշկական թանզիֆի պատրաստման համար բամբակե սպիտակ գործվածք՝ բամբակի մանրաթելերի 85% զանգվածային բաժին կամ դրանից ավելի պարունակությամբ, 100գ/մ2-ից ոչ ավելի մակերեսային խտությամբ, ապրանքատեսակը դասակարգվում է ԱՏԳ ԱԱ 5208 21 1000 0 ծածկագրով: Նշված ծածկագիրը բացակայում է ՀՀ կառավարության 05.10.2017թ.-ի թիվ 1317-Ն որոշման թիվ 3 հավելվածի 3-րդ կետի 1-ին ենթակետում նշ-ած ծածկագրերի ցանկում, բժշկական թանզիֆը բացակայում է նաև նույն հավելվածով սահմանված «Բժշկական նշանակության ապրանքների ցանկում», հետևաբար դրանց առնչությամբ կատարվող գործարքներն ազատված չեն ԱԱՀ-ից: «Լեյկո» ՍՊԸ-ի կողմից իրացվող

ապրանքները հենց ԱՏԳ ԱԱ 5208 21 1000 0 ծածկագրով «Լեյկոալեքս» ՍՊԸ-ի կողմից ներմուծված և վերջինից ձեռքբերված, ԱԱՀ-ով հարկվող ապրանքներն են, և դրանով էլ հենց պայմանավորված է ԱԱՀ-ի առկայությանը, որպիսի հանգամանքը, համաձայն արդեն իսկ վերը նշված հիմնավորումների, որևէ դեպքում չի կարող դիտարկվել գնումների գործընթացը կարգավորող իրավական ակտերի պահանջների խախտում:

Ճիշտ է, «Լեյկո» ՍՊԸ-ն 3-րդ չափաբաժնի մասով հաղթող չի ճանաչվել, սակայն, 3-րդ չափաբաժնի մասով գնահատող հանձնաժողովի որոշումները վերացվելու դեպքում «Լեյկո» ՍՊԸ-ն հնարավորություն կունենա հիշյալ չափաբաժնում հաղթող լինելու գործում՝ վերը նշված հանգամանքներով հիմնավորելով բժշկական թանզիֆի մասով գործարքներում ԱԱՀ նախատեսելու իրավաչափությունը:

2. Անդրադառնալով Բողոքաբերի նշած՝ 32-36-րդ չափաբաժիններով նախատեսված ձեռնոցների մասով թույլ տրված ենթադրյալ խախտումներին՝ հայտնում ենք հետևյալը:

ՀՀ կառավարության 05.10.2017թ.-ի թիվ 1317-Ն որոշման թիվ 3 տեղ գտած «Բժշկական նշանակության ապրանքների ցանկի» 31-րդ և 32-րդ կետերի համաձայն՝ ԱԱՀ-ից ազատվում են տարբեր չափի ռետինե անատոմիակին, ինչպես նաև տարբեր չափի ռետինե վիրաբուժական ձեռնոցների օտարման գործարքները:

Բողոքաբերը նշել է, որ «ԳԾ-ԳՀԱՊՁԲ-2021-1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 32-36-րդ չափաբաժիններում ներառված ապրանքները հանդիսանում են բնական հումքից՝ կաուչուկի լատեքստից պատրաստված ռետինե ձեռնոցներ, որոնցից ստերիլները կիրառվում են վիրաբուժական միջամտությունների, իսկ ոչ ստերիլները՝ ոչ վիրաբուժական միջամտությունների ժամանակ: Ըստ Բողոքաբերի՝ նշել է, որ «ԳԾ-ԳՀԱՊՁԲ-2021-1» ծածկագրով գնանշման հարցման 32-36-րդ չափաբաժիններում ներառված ապրանքները ՀՀ կառավարության 05.10.2017թ.-ի թիվ 1317-Ն որոշման թիվ 3 հավելվածում տեղ գտած «Բժշկական նշանակության ապրանքների ցանկի» 31-րդ և 32-րդ կետերում նշված նույն ապրանքներն են և դրանց օտարման գործարքներն ազատված են ԱԱՀ-ից:

Բողոքաբերի վերոնշյալ դիրքորոշման հետ որևէ կերպ չենք կարող համաձայնվել՝ հիմք ընդունելով ներքոնշյալ հիմնավորումները:

Նախ նշենք, որ ՀՀ առողջապահության նախարարի 11.10.2013թ.-ի թիվ 2718-Ա հրամանի հավելվածով հաստատվել է «Ձեռնոցները բժշկական միջամտությունների

անվտանգության ապահովման միջոց» մեթոդական ուղեցույցը, որի «Ձեռնոցների դասակարգումը» վերտառությամբ 6-րդ բաժնի համաձայն՝

Ձեռնոցները դասակարգվում են.

1) ըստ պատրաստման նյութի

ա. լատեքսային

բ. նիտրիլային

գ. նեոպրենային

դ. վինիլային

ե. պոլիէթիլենային և այլն

2) ըստ նշանակության և կիրառման ոլորտների

ա. վիրաբուժական

բ. միանվագ զննման

գ. տեխնիկական կամ կենցաղային

3) ըստ ձևի

ա. անատոմիական-տարբերակված աջ և ձախ ձեռքի համար

բ. ունիվերսալ-միանման՝ երկու ձեռքերի համար

4) ըստ մակերեսի բնույթի

ա. հարթ

բ. անհարթ՝ նուրբ բժշկական գործիքներով աշխատանքը հեշտացնելու համար

5) ըստ նախնական մանրէազերծման

ա. մանրէազերծ

բ. ոչ մանրէազերծ:

Հիշյալ դասակարգումից պարզ է դառնում, որ ոչ բոլոր բժշկական, այդ թվում՝ վիրաբուժական ձեռնոցներն են պատրաստվում լատեքսից: Եվ նաև մեզ համար պարզ չէ Բողոքաբերի դիրքորոշումն առ այն, որ լատեքսից պատրաստված ձեռնոցները բոլոր դեպքերում պետք է որակվեն որպես ռետինե ձեռնոցներ: Բողոքաբերը չի վկայակոչել իր այդ դիրքորոշման փաստական հիմքերը հավաստող և ոչ մի ապացույց, չկա այդ մասով և ոչ մի նորմատիվ կամ թեկուզ գիտական հղում:

Ավելին, քննարկվող գնանշման հարցման ընթացակարգի 32-35-րդ չափաբաժինների մասով «Լեյկո» ՍՊԸ-ի կողմից իրացվող ձեռնոցները, արտադրողի կողմից տրամադրված տեխնիկական անձնագրի2 համաձայն, պատրաստված են նիտրիլից, և ոչ մի նշում չկա

այն մասին, դրանք հանդիսանում ձեռնոցներ կամ անատոմիական են, որը պահանջվում է «Բժշկական նշամակության ապրանքների ցանկի» 31-րդ կետում: Նույն ցանկի 32-րդ կետում բացակայում է անատոմիական բառը, որը պարտադիր է մանրէազերծ րի հա մար: Ուղեկցող փաստաթղթերում արտացոլված բնութագրերի հաշվառմամբ են «Լեյկո» ՍՊԸ-ի իրացվող ձեռնոցների մասով նախատեսվել ԱԱՀ գումարներ: Չունենալով որևէ փաստական տվյալ, որևէ փաստաթուղթ առ այն, որ «Լեյկո» ՍՊԸ-ի կողմից իրացվող ձեռնոցներն իրենցից ներկայացնում են ռետինե ձեռնոցներ, մեր ընկերությունը դրանց օտարումը իրավաչափորեն դիտարկել է որպես ԱԱՀ-ով հարկվող: Մեր ընկերության կողմից հակառակ գործողությունը' ԱԱՀ-ից ազատվող գործարքներ դիտարկելն ինքնին վիճահարույց կլիներ և օրենսդրական պահանջների խախտում: Քննարկվող դեպքում «Լեյկո» ՍՊԸ-ի կողմից որևէ նորմատիվ իրավական ակտի չի խախտվել, և Բողոքաբերի' 32-36-րդ չափաբաժինների մասով գնահատող հանձնաժողովի որոշումները չեղյալ հայտարարելու պահանջը դիտարկում ենք անհիմն և գտնում ենք, որ այդ մասով բողոքը ենթակա է մերժման:

3.Անդրադառնալով Բողոքաբերի վկայակոչած' գնահատող հանձնաժողովի անգործությանը' նշենք, որ գնահատող հանձնաժողովի կողմից ՀՀ ֆինանսների փոխնախարարի գրության մեջ վկայակոչված իրավական հանգամանքների անդրադառնալը չէր կարող որևէ ազդեցություն ունենալ նույն հանձանժողովի կողմից 32-36-րդ չափաբաժինների մասով կայացված որոշման փոփոխության վրա' հատկապես այն հանգամանքի հաշվառմամբ, որ նույն գրության մեջ ՀՀ ֆինանսների նախարարը նշել է, որ «Ինչ վերաբերում է ընկերության կողմից օտարվող ձեռնոցները որպես անատոմիական կամ վիրաբուժական ձեռնոցներ որակելուն, ապա հայտնում ենք, որ այդ հարցի քննարկումը դուրս է ՀՀ ֆինանսների նախարարության իրավասությունների շրջանակից»: Գնահատող հանձնաժողովը «Լեյկո» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ձեռնոցները գնահատել է «ԳԾ-ԳՀԱՊՁԲ-2021-1» ծածկագրով հարցման ընթացակարգով պահանջվող ապրանքներին համապատասխանող, քննարկման առարկա չի դարձրել ներկայացված ձեռնոցների' ռետինե կամ ոչ ռետինե լինելը, քանզի նման պահանջ գնման առարկայի տեխնիկական բնութագրերում սահմանված չի եղել: Ինչ վերաբերում է այս կամ այն ձեռնոցները ռետինե որակելուն, դրանց օտարումը ԱԱՀ-ից ազատվող դիտարկելուն, ապա դա յուրաքանչյուր անգամ ենթակա է ստուգման ապրանքն ուղեկցող փաստաթղթերի և գուցե համապատասիխան փոր ձաքն նու թյուն նշանակելու միջոցով,

այլ ոչ թե բոլոր դեպքերում այն դիտարկել ռետինե և շահարկել դրա' ԱԱՀ-ից ազատված լինելու հանգամանքը' չպատկերացնելով բժշկական ձեռնոցների պատրաստման նյութերի տարբերություններն ու դրանցից կախված' ձեռնոցները ռետինե կամ ոչ ռետինե որակելու նրբությունները: Գտնում ենք, որ գնահատող հանձնաժողովի կողմից ՀՀ ֆինանսների նախարարի նախարարի տեղակալի գրությանը չանդրադառնալը չի կարող որպես անգործություն, որի արդյունքում խախտվել են Բողոքաբերի իրավունքները, խախտվել են գնումների ընթացակարգերը կարգավորող իրավական ակտերի պահանջները, ուստի այդ մասով Բողոքաբերի պահանջը ենթակա»:

Այնուհետև՝ 11.03.2021թ., Ընկերության կողմից ներկայացվել է վերը շարադրված դիրքորոշման լրացում՝ հետևյալ բովանդակությամբ.

«Ի լրումն 02.03.2021թ.-ին ներկայացված դիրքորոշման և կից նյութերի՝ հայտնում ենք հետևյալը:

«02.03.2021թ.-ին կայացած նիստի ժամանակ մենք՝ «Լեյկո» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ Դավիթ Հովսեփյանս և Աննա Ալեքսանյանը, հայտարարեցինք, որ մեր կողմից «ԳԾ-ԳՀԱՊՁԲ-2021-1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 32-35-րդ չափաբաժինների համար ներկայացված ձեռնոցները պատրաստված են եղել նիտրիլից, ի հավաստումն որի՝ սույն գրությանը կցում ենք արտադրողի կողմից տրամադրված Վերլուծության վկայականի հայերեն տարբերակը, որի բովանդակությունից հստակ երևում է, որ մեր ընկերության կողմից առաջարկված ձեռնոցներն իրենցից ներկայացնում են փոշեծածկ սինթետիկ նիտրիլային ոչ լատեքսային անատոմիական վիրաբուժական ձեռնոցներ: Նշված է ձեռնոցների կազմությունը, որտեղ բառ անգամ չկա դրանց՝ ռետինից պատրաստված լինելու մասին, քանի որ հստակ նշված է անատոմիական են և ոչ լատեքսային: Հետևաբար, արձանագրելով, որ մեր ընկերության կողմից առաջարկված ձեռնոցներն իրենցից ներկայացնում են սինթետիկ նիտրիլային ոչ լատեքսային անատոմիական վիրաբուժական ձեռնոցներ, ակնհայտ է դառնում, որ մեր ընկերըությունը, ինչպես նաև վերջինիս մատարակար հանդիսացող «Լեյկոալեքս» ՍՊ ընկերությունը, չէին կարող հիշյալ ձեռնոցների օտարումը ՀՀ կառավարության 05.10.2017թ.-ի թիվ 1317-Ն որոշման թիվ 3 հավելվածում տեղ գտած «Բժշկական նշանակության ապրանքների ցանկի» 32- րդ կետի հաշվառմամբ դիտարկել ԱԱՀ-ից ազատված:

«ԳԾ-ԳՀԱՊՁԲ-2021-1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 36-րդ չափաբաժնի համար ներկայացված ձեռնոցները պատրաստված են եղել նիտրիլից, ի

հավաստումն որի՝ սույն գրությանը կցում ենք արտադրողի կողմից տրամադրված քիմիական արտադրանքի անվտանգության անձնագրի հայերեն թարգմանությամբ տարբերակը, որի 1.2. կետի բովանդակությունից երևում է, որ մեր ընկերության կողմից առաջարկված ձեռնոցներն իրենցից ներկայացնում են սինթետիկ ոչ ռետինե ոչ անատոմիական ձեռնոցներ՝ նախատեսված մեկանգամյա օգտագործման համար:

Նույն անձնագրի 2-րդ կետում նշված է ձեռնոցների կազմությունը, որտեղ բառ անգամ չկա դրանց՝ ռետինից պատրաստված լինելու մասին: Հետևաբար, արձանագրելով, որ մեր ընկերության կողմից առաջարկված ձեռնոցներն իրենցից ներկայացնում են սինթետիկ ոչ ռետինե ոչ անատոմիական ձեռնոցներ, ակնհայտ է դառնում, որ մեր ընկերությունը, ինչպես նաև վերջինիս մատարակար հանդիսացող «Լեյկոալեքս» ՍՊ ընկերությունը, չէին կարող հիշյալ ձեռնոցների օտարումը ՀՀ կառավարության 05.10.2017թ.-ի թիվ 1317-Ն որոշման թիվ 3 հավելվածում տեղ գտած «Բժշկական նշանակության ապրանքների ցանկի» 31-րդ կետի հաշվառմամբ դիտարկել ԱԱՀ-ից ազատված, քանզի նման գործելաոճն ինքնին կդիտարկվեր հարկային օրենսդրության և ոլորտին վերաբերող նորմատիվ իրավական այլ ակտերի պահանջների խախտում, և, ըստ այդմ, հարկային պատասխանատվության հիմք: Եվս մեկ անգամ շեշտում ենք, որ ձեռնոցների մասով բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

